ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

ք.Երևան «12» փետրվար 2024թ № 470-Ա

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2021 ԹՎԱԿԱՆԻ ՄԱՐՏԻ 5-Ի N 170-Ա ԵՎ ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷԿՈՆՈՄԻԿԱՅԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2020 ԹՎԱԿԱՆԻ ՀՈԿՏԵՄԲԵՐԻ 19-Ի N 1320-Ա ՀՐԱՄԱՆՆԵՐՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆՆԵՐ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածով, Հայաստանի Հանրապետության կառավարության 2013 թվականի հունիսի 13-ի N 623-Ն որոշման 1-ին կետով հաստատված հավելվածի 41.1 կետով և Հայաստանի Հանրապետության վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի N 658-Լ որոշման հավելվածի 18-րդ կետի 21-րդ ենթակետով՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ.

1. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2021 թվականի մարտի 5-ի ««Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ արտադրանքի սերտիֆիկացման մարմնին Հայաստանի Հանրապետության (ՀՀ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների

համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» N 170-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի 1-ին կետում «N 1-A, N 1-B, N 1/2-B» թվերը փոխարինել «N 1, N 2» թվերով:

2) Հրամանի հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերի ցանկի Հայաստանի Հանարպետության տեխնիկական կանոնակարգերի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1. ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի «Սինթետիկ հիմքով լաքերի և ներկերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1647-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 916-Ն որոշում (միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «3208-ից» և «3209-ից» ծածկագրերի ներքո՝ տվյալ իրավական ակտում ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք),».

3) Հրամանի հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերի ցանկի Հայաստանի Հանարպետության տեխնիկական կանոնակարգերի 5-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «5. ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 16-ի «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքների անվտանգության մասին տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 957-Ն որոշում (միայն տվյալ տեխնիկական կանոնակարգով սահմանված արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք),»:

2. Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2020 թվականի հոկտեմբերի 19-ի ««Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» փակ բաժնետիրական ընկերության փորձարկման լաբորատորիային Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերով սահմանված արտադրանքի (օբյեկտի) և ցուցանիշների

համապատասխանության գնահատման գործունեություն իրականացնող մարմին նշանակելու մասին» N 1320-Ա հրամանում կատարել հետևյալ փոփոխությունները.

1) Հրամանի 1-ին կետում «N 1-A, N 1-B, N 1/1/Y2-A, N 1/Y1/Y2/2-B» թվերը փոխարինել «N 1, N 2» թվերով:

2) Հրամանի հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերի ցանկի Հայաստանի Հանարպետության տեխնիկական կանոնակարգերի 1-ին կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «1. ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 8-ի «Սինթետիկ հիմքով լաքերի և ներկերի տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2004 թվականի նոյեմբերի 18-ի N 1647-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 916-Ն որոշում (միայն արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի «3208-ից» և «3209-ից» ծածկագրերի ներքո՝ տվյալ իրավական ակտում ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք)»,

3) Հրամանի հավելվածով հաստատված Հայաստանի Հանրապետության (ՀՀ) և Եվրասիական տնտեսական միության (ԵԱՏՄ) տեխնիկական կանոնակարգերի ցանկի Հայաստանի Հանարպետության տեխնիկական կանոնակարգերի 4-րդ կետը շարադրել հետևյալ խմբագրությամբ՝ «4. ՀՀ կառավարության 2023 թվականի հունիսի 16-ի «Կենցաղային և սանիտարահիգիենիկ նշանակության թղթե և քիմիական թելքերից ապրանքների անվտանգության մասին տեխնիկական կանոնակարգը հաստատելու և Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի հոկտեմբերի 19-ի N 1546-Ն որոշումն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 957-Ն որոշում (միայն տվյալ տեխնիկական կանոնակարգով սահմանված արտաքին տնտեսական գործունեության միասնական ապրանքային անվանացանկի ծածկագրերի ներքո ներառված և ԵԱՏՄ տեխնիկական կանոնակարգման օբյեկտ չհանդիսացող արտադրանք)»:

3. Հիմք ընդունելով սույն հրամանի 1-ին և 2-րդ կետերը՝ համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-04 վկայականը վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական՝ Ն-04 և շնորհել նույնականացնող համար՝ Ն-04 (Հ-04) 2024, համապատասխանության գնահատման մարմնի նշանակման N Ն-05 վկայականը

վերաձևակերպել և տրամադրել նշանակման նոր վկայական՝ Ն-05 և շնորհել նույնականացնող համար՝ Ն-05 (Հ-05) 2024:

4. Հայաստանի Հանրապետության «Ստանդարտացման և չափագիտության ազգային մարմին» ՓԲԸ և «ԼԻԳԱ ԻՆՇՈՒՐԱՆՍ» ապահովագրական ՓԲԸ միջև կնքված մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետի ավարտից (Թիվ LI003365 մասնագիտական պատասխանատվության ապահովագրության վկայագրի գործողության ժամկետն ավարտվում է 2025 թվականի հունվարի 15-ը ներառյալ) 1 օր հետո Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարությանը տրամադրել մասնագիտական պատասխանատվության ապահովագրության նոր վկայագիր:

5. Սույն հրամանի 1-ին և 2-րդ կետերով նախատեսված փոփոխությունները գրանցել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի 2013 թվականի սեպտեմբերի 3-ի N 801-Ա հրամանով հաստատված համապատասխանության գնահատման նշանակված մարմինների գրանցամատյանում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել Հայաստանի Հանրապետության էկոնոմիկայի նախարարի տեղակալ Ն. Տերյանին:

3/1/2024

ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ

Signed by: KHOJOYAN ARMAN 1507870647

ԱՐՄԱՆ ԽՈՋՈՅԱՆ

ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ ԿԱՏԱՐՈՂ